Պարոն/Տիկին Զարուհի Ստեփանյանին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ. Բաղրամյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

/Գ. Բաղրամյան

«30» 05 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Էդուարդ Զառանցյան
   - Արմեն Հունանյան,
   - Զարուհի Ստեփանյան,
   - Սիրանուշ Ղարախանյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- Նախագահի խորհրդական,
- հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի պետ,
- միջազգային համագործակցության բաժնի պետ,
- հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Բուխարեստ, Ռումինիա, 2024 թվականի մայիսի 22-24-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցությունը կարգավորողների ցանց (EaPeReg):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել EaPeReg ցանցի 23-րդ լիագումար ժողովին և

«Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի տեղակայմանը արդյունավետության և դրանց գործարկման խթանման՝ գործարկման հետ կապված ծախսերի նվազեցմամբ» թեմայով աշխատանքային սեմինարին և TAIEX գործիքի աջակցությամբ կազմակերպված Ռումինիայի ազգային կարգավորող մարմնի ռադիոհաճախականությունների լաբորատորիայի այցին:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ Հանդիպման ընթացքում EaPeReg ցանցի 2024 թվականի նախագահող՝ Մոլդովայի էլեկտրոնային հաղորդակցության և տեղեկատվական համակարգերի կարգավորող հանձնաժողովի և փոխնախագահող՝ Ռումինիայի հաղորդակցության կառավարման և կարգավորման ազգային մարմնի (ANCOM) ներկայացուցիչները ներկայացրին 2024 թվականի ընթացքում ցանցի կողմից իրականացված աշխատանքները, Եվրոպական միության կողմից տրամադրվող աջակցությունը, «ԵՄ-ն հանուն թվային օրակարգի» (EU4Digital) նախաձեռնության շրջանակում կատարված վերլուծությունները, ինչպես նաև ցանցի և ցանցում գործող աշխատանքային խմբերի հետագա ծրագիրը:

Մասնավորապես՝ ներկայացվեցին EaPeReg ցանցում գործող աշխատանքային խմբերի կողմից 2023 թվականի ընթացքում իրականացված աշխատանքները՝

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որպես ռումինգի հարցերով աշխատանքային խմբի (REWG) նախագահող, ի դեմս Զ. Ստեփանյանի ներկայացրեց խմբի կողմից սույն թվականի սկզբից ի վեր կատարված աշխատանքները: Նշվեց, որ Ռումինգի հարցերով տարածաշրջանային համաձայնագրի ստորագրման նպատակով անցկացվել են մի քանի հանդիպումներ, որոնց արդյունքում լրամշակված համաձայնագրի նախագիծը շրջանառվել է ԵՄ ԱԼԳ երկրներում, սակայն մինչ օրս Ուկրաինայի ներկայացուցիչները չեն ներկայացրել իրենց նկատառումները համաձայնագրի նախագծի վերաբերյալ: Ուստի, ներկայումս EU4Digital նախաձեռնությունը ակնկալելով Ուկրաինայի ազգային կարգավորող մարմնի դիրքորոշում՝ պատրաստվում է հանդիպում կազմակերպել ԵՄ ԱԼԳ երկրների բոլոր շահագրգիռ մարմինների հետ: Հանդիպման մանրամասները կներկայացվեն ավելի ուշ:

  Միևնույն ժամանակ նշվեց, որ հանձնաժողովի և Վրաստանի ազգային կարգավորող մարմնի ներկայացուցիչների կողմից բարձրացվել էր ձայնային զանգերի վերջնավորման շուկայի վերլուծության անհրաժեշտության հարցը, որի մասով REWG խմբի ներկայացուցիչները դիմել էին Եվրոպական հանձնաժողովին և սույն

թվականի հունվար ամսին ստացել վերլուծության իրականացման համար ԵՄ համաձայնությունը: EU4Digital նախաձեռնության ներկայացուցիչները նախապատրաստել են ձևաթուղթ, որի բերաբերյալ ակնկալում են ԵՄ ԱլԳ երկրների դիրքորոշումը: Հետագա գործողությունները և դրանց ժամկետները կքննարվեն դիրքորոշումներն ստանալուց հետո:

- Ռադիոհաճախականությունների հարցերով աշխատանքային խմբի (SEWG) նախագահողը նշեց, որ ներկայումս քննարկվում է ԵՄ ԱլԳ տարածաշրջանում շարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրման համար օգտագործվող նոր ռադիոհաճախականությունների մասով կոորդինացիոն համաձայնագրի մշակման նպատակահարմարությունը: Միևնույն ժամանակ, խմբի շրջանակում քննարկվել են Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) կողմից կազմակերպող՝ Ռադիոհաճախականությունների համաշխարհային կոնֆերանսի (WRC) ընթացքում Եվրոպական միության կողմից ներկայացված դիրոքրոշումը:

- Կարգավորողների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանային խմբի (IRB EWG) նախագահողի կողմից ներկայացվեցին խմբի շրջանակում իրականացվող աշխատանքները, մասնավորապես՝ ԵՄ ԱլԳ երկրներում լայնաշերտ կապի հասանելիության մասին մշակվող հաշվետվությունը, որի նախագիծը նախապատրաստվել է EU4Digital նախաձեռնության փորձագետների կողմից: Խումբն իրականացնում է լայնաշերտ ինտերնետ հասանելիության շուկաների վերլուծություն, որի նպատակով համապատասխան հարցաշարերը լրացվել և ուղարկվել են EU4Digital նախաձեռնության փորձագետներին:

Նիստի ընթացքում քննարկվեց նաև EaPeReg ցանցի միջազգային համագործակցությունը Էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), Եվրամիջերկրական կարգավորողների խմբի (EMERG), ինչպես նաև Ռադիոհաճախականությունների քաղաքականություն մշակողների խմբի (RSPG) հետ, որը սկսվել է 2022 թվականին՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահության տարվա ընթացքում:

Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության (DG NEAR) ներկայացուցիչները խոսեցին EaPeReg ցանցի արդյունավետության և հետագայում դրա աշխատանքներին աջակցության վերաբերյալ:

Միջոցառման երկրորդ օրն անցկացվեց «Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի տեղակայմանը արդյունավետության և դրանց գործարկման խթանման՝ գործարկման հետ

կապված ծախսերի նվազեցմամբ» թեմայով աշխատանքային սեմինար: Սեմինարի ընթացքում Ռումինիայի, Չեխիայի, Մոլդովայի, Լեհաստանի և Գերմանիայի ազգային կարգավորող մարմինների ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին ենթակառուցվածքների համատեղ օգտագործման, սակագների սահմանման, վեճերի լուծման, ԵՄ-ում լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցանցերի ներդրման ծախսերի նվազեցման կանոնակարգի (BCRD) իրականացման կարգավիճակը, ինչպես նաև նոր ընդունված Գիգաբիթ ենթակառուցվածքների օրենքի (GIA) ներդման առանձնահատկությունները:

Միջոցառման երրորդ օրը կազմակերպվել էր այց Ռումինիայի ազգային կարգավորող մարմնի ռադիոհաճախականությունների լաբորատորիա, որտեղ ներկայացվեցին էլեկտրամագնիսական համատեղելիության, վերջնական օգտագործողի առողջության և անվտանգության պահպանման, ինտերֆերենցիայի չափումների իրականացման համար օգտագործվող սարքավորումները և չափման մեթոդները:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպման արդյունքներով պայմանավորված հանձնաժողովը, որպես ռումինգի հարցերով աշխատանքային խմբի (REWG) նախագահող, կշարունակի աշխատանքների՝ խմբի բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովը ներկայումս հանդիսանալով EaPeReg ցանցում գործող երկու աշխատանքային խմբերի ղեկավարող, իր պատրաստակամությունն է հայտնել շարունակել աջակցել Մոլդովայի էլեկտրոնային հաղորդակցության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ազգային կարգավորող գործակալությանը (ANRCETI) և Ռումինիայի հաղորդակցության կարգավորման ազգային մարմնին (ANCOM)՝ 2024 թվականի նախագահության, 2024 թվականի աշխատանքային ծրագրի իրականացման հարցում:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ նախատեսվում է որպես EaPeReg ցանցում գործող երկու աշխատանքային խմբերի ղեկավարող, շարունակել մասնակցել 2024 թվականի նախագահության կողմից կազմակերպվող պարբերական հանդիպումներին՝ ընթացիկ աշխատանքները քննարկելու նպատակով, ինչպես նաև

EaPeReg ցանցի Troika-ի հանդիպումներին՝ աշխատանքային ծրագրի իրականացումը քննարկելու նպատակով:

Հաշվի առնելով հանդիպման ընթացքում ներկայացված ձայնային զանգերի վերջնավորման շուկայի վերլուծության ձևաչափը՝ առաջարկում ենք շարունակել համատեղ աշխատանքները EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ՝ վերլուծության համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստման, հարցաթերթիկների լրացման և հետագայում ներկայացված վերլուծության արդյունքների ուսումնասիրության մասով:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ EaPeReg ցանցի 2024 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն հանձնաժողովը, որպես ռոումինգի հարցերով աշխատանքային խմբի նախագահող, հանդիսանում է աշխատանքային խմբի հանդիպումների կազմակերպման պատասխանատու մարմին՝ նախատեսվում է իրականացնել համապատասխան համակարգման աշխատանքներ նշված գործընթացների կազմակերպման համար:

Առաջարկվում է ենթակառուցվածքների համատեղ օգտագործման, սակագների սահմանման, վեճերի լուծման, ԵՄ-ում լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցանցերի ներդրման ծախսերի նվազեցման կանոնակարգի (BCRD) կիրառման և նոր ընդունված Գիգաբիթ ենթակառուցվածքների օրենքի (GIA) ներդման վերոնշյալ երկրների փորձը դիտարկել նաև ներկայումս քննարկվող՝ ՀՀ-ում ենթակառուցվածքների համատեղ օգտագործման օրենսդրության մշակման շրջանակում:

Գործուղվող ---------- 30.05.24 ---------- ***Է. Զառանցյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 30.05.2024թ ***Ա. Հունանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 30.05.2024թ. ***Հ. Ստեփանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 30.05.2024թ ***Ս. Ղարախանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N
1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. **Մարմնի անվանումը** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. **Գործուղման մասին իրավական ակտի համարը** Հրաման 406-ՀՆ ,Հրաման 407-ԳՔ , 16.05.2024թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահի խորհրդական՝ **Էդուարդ Զաքանցյանին** ,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիանկան զարգացման բաժնի պետ՝ **Արմեն Հունանյանին** ,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի պետ՝ **Զարուհի Ստեփանյանին** ,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիանկան զարգացման բաժնի գլխավոր մասնագետ՝ **Սիրանուշ Ղարախանյանին**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **Բուխարես / Ռումինիա /**

5. Գործուղման ժամկետները **21.05.2024 - 25.05.2024թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ **ճանապարհածախս ,գիշերավարձ**

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ օրապահիկ՝ **օրապահիկ**

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Էդուարդ Զաքանցյան	Արմեն Հունանյան	Զարուհի Ստեփանյան	Սիրանուշ Ղարախանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)	-	-	-		-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ դոլար)	75	75	75	75	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	29,070.0	29,070.0	29,070.0	29,070.0	
	Օրերի քանակը	5	5	5	5	
	Ընդամենը (դրամ)	145,350.0	145,350.0	145,350.0	145,350.0	581.400
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (*նկարագրել*)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		145.350	145.350	145.350	145.350	581.400

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 27.05.2024թ.